ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

0019 ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան 19, +374 11 533 342, sergey.bagratyan@parliament.am

№ 2 «07» սեպտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով և 67-րդ հոդվածով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են՝

1. օրենքի նախագիծը (զեկուցող՝ Սերգեյ Բագրատյան)
2. օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը
3. տեղեկանքը փոփոխվող հոդվածի վերաբերյալ:

Խնդրում եմ օրենքի ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՐԳԵՅ ԲԱԳՐԱՏՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի 54-Ն սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության «դիպլոմ)» բառից և կետադրական նշանից հետո լրացնել.

*««և ԿԸՀ-ի կողմից տրամադրված հայերենի գրավոր՝ թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը:»* բառերով և կետադրական նշանով»:

**Հոդված 2.** «Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի 54-Ն սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի «տեղեկանքը բառից հետո «.» կետադրական նշանը հանել և լրացնել.

*««և ԿԸՀ-ի կողմից տրամադրված հայերենի գրավոր՝ թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը:»* բառերով և կետադրական նշանով»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Սահմանադրության և ընտրական օրենսգրքի այս հոդվածներից բխում է նաև, որ պատգամավորի թեկնածուն պետք է տիրապետի հայերենին:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ): Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով, որը պետք է նախատեսի հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման ողջամիտ, օբյեկտիվ չափորոշիչներ, ինչպես նաև գործընթացի վերահսկողության ընթացակարգեր: Ստուգման արդյունքները եռօրյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության

(կուսակցությունների դաշինքի) դիմումին կից ներկայացվում են՝.... հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված տեղեկանքը:

Սույն օրենքի նախագիծը բխում է նաև Լեզվի մասին ՀՀ օրենքից և ապահովվում է պետական ինստիտուտի նկատմամբ հանրային հարգանքը:

Դրանով իսկ կբացառվի դրույթների ձևական իմաստը և նոր իրավաքաղաքական հարաբերություններում ձևականից անցում կկատարվի բովանդակայինի: Հայաստանն ամենահին այբուբենն ունեցող ժողովուրդներից մեկն է և պետք է պահպանի էթնիկ լեզվամտածողությունը և այն փոխանցի հաջորդ սերունդներին:

Պահանջի կիրառումը սկսում ենք պետական բարձրագույն մարմնից, դրանով իսկ ուղերձ հղելով ժողովրդի լայն զանգվածներին, առ այն, որ այլևս պետական կարևորագույն խնդիրների նկատմամբ ձևական մոտեցում չի լինելու: Հասարակության իրավագիտակցության զարգացման ուղղությամբ կարևոր քայլ է:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է 80-րդ և 84-րդ հոդվածները լրացնել ԿԸՀ-ի կողմից տրամադրված հայերենի թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը պարբերությամբ, որով իսկ կբացառվի հայերենին տիրապետելու փաստը միայն նախկինում ստացված փաստաթղթերով հավաստելը:

3. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող հոդվածի փոփոխման արդյունքում վերացվում են հայերենին ձևական տիրապետելու հանգամանքը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 80. Ընտրվելու իրավունքը

1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմում տալու օրվան նախորդող 1 461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

3. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ): Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով, որը պետք է նախատեսի հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման ողջամիտ, օբյեկտիվ չափորոշիչներ, ինչպես նաև գործընթացի վերահսկողության ընթացակարգեր: Ստուգման արդյունքները եռօրյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան:

Հոդված 80. Ընտրվելու իրավունքը

1. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Քաղաքացին վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող չի համարվում, եթե թեկնածուի գրանցման համար մշտապես բնակվելու մասին տեղեկանքը ստանալու նպատակով բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմում տալու օրվան նախորդող 1 461 օրերի ընթացքում նա առնվազն 731 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:

3. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ) և ԿԸՀ-ի կողմից տրամադրված հայերենի գրավոր՝ թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը:

Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով, որը պետք է նախատեսի հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման ողջամիտ, օբյեկտիվ չափորոշիչներ, ինչպես նաև գործընթացի վերահսկողության ընթացակարգեր: Ստուգման արդյունքները եռօրյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան:

Հոդված 84. Պատգամավորի թեկնածու առաջադրելը

1. Կուսակցություններն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին դիմումը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ իրենց մշտական գործող ղեկավար մարմնի որոշման հիման վրա, իսկ դիմումը ստորագրում է կուսակցության ղեկավարը: Կուսակցությունների դաշինքներն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են դաշինքի անդամ կուսակցությունների մշտական գործող ղեկավար մարմինների որոշումների հիման վրա, իսկ դիմումը ստորագրում են դաշինքի անդամ կուսակցությունների ղեկավարները:

2. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության (կուսակցությունների դաշինքի) դիմումին կից ներկայացվում են՝

1) կուսակցության կանոնադրությունը (դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունները).

2) կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշումը (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումները)՝ համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ.

3) համապետական և տարածքային ընտրական ցուցակները.

4) ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների գրավոր հայտարարությունները՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին.

5) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած համապետական ցուցակը.

6) նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.

7) տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.

8) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված տեղեկանքը.

9) ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Հոդված 84. Պատգամավորի թեկնածու առաջադրելը

1. Կուսակցություններն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին դիմումը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ իրենց մշտական գործող ղեկավար մարմնի որոշման հիման վրա, իսկ դիմումը ստորագրում է կուսակցության ղեկավարը: Կուսակցությունների դաշինքներն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են դաշինքի անդամ կուսակցությունների մշտական գործող ղեկավար մարմինների որոշումների հիման վրա, իսկ դիմումը ստորագրում են դաշինքի անդամ կուսակցությունների ղեկավարները:

2. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության (կուսակցությունների դաշինքի) դիմումին կից ներկայացվում են՝

1) կուսակցության կանոնադրությունը (դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունները).

2) կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշումը (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումները)՝ համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ.

3) համապետական և տարածքային ընտրական ցուցակները.

4) ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների գրավոր հայտարարությունները՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին.

5) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած համապետական ցուցակը.

6) նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.

7) տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.

8) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված տեղեկանքը և ԿԸՀ-ի կողմից տրամադրված հայերենի գրավոր՝ թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը:

9) ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները: